ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցման ակտիվ մեթոդները որպես սովորողների ներգրավածության բարձրացման միջոց:

Կատարող՝ Հակոբյան Հասմիկ

/Անուն, ազգանուն, հայրանուն/

«Օյունջյան» դպրոց-վարժարան, դասվար

/ դպրոց, մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Փարկիթյան Անահիտ

/Անուն, ազգանուն, հայրանուն/

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Ուսուցման ակտիվ մեթոդներ 4
Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման էությունը..... 9
Ինտերակտիվ դասի սկզբունքները և արդյունքները 11
Ինտերարկտիվ մեթոդներ 13
Դիսկուսիա «քննարկում» 14
Գործնական խաղ 14
Եզրակացություն 15
Օգտագործված գրականություն..... 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչը դասերի ընթացքում օգտագործում է դասավանդման տարբեր մեթոդներ, որոնց միջոցով ուսուցման պրոցեսը կարելի է դարձնել ավելի արդյունավետ:

XXI-րդ դարում մտածողության գլոբալիզացիայի, հասարակության ժողովրդավարացման, բաց շուկայական տնտեսության, հասարակության բազմակողմանի ինֆորմատիզացիայի պայմաններում մեծանում են պահանջները բարձրագույն մասնագիտական կրթության նկատմամբ, որը պետք է պատրաստի պահանջված մրցակցության ընդունակ մասնագետներ: Այդ պատճառով կրթության ոլորտը ենթարկվում է փոփոխությունների: Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: Այժմ ուսումնական հաստատությունում ուուցման ռազմավարությունը փոխարինվում է զարգացման ռազմավարությամբ: Ամբողջ կյանքի ընթացքում ինքնազարգացման ռազմավարությունը հնարավոր կլինի եթե դեռ դպրոցական տարիներին ապագա մասնագետը տիրապետի ուսումնա-հետազոտական գործունեությանը: Ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն առաջացնի: Իսկ դրա համար ուսուցման պրոցեսը, պետք է հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից: Հետազոտությունները ցույց են տվել, որ

Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10%

Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը:

Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ ակտիվ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

- Համախմբել դասի ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմտությունները,
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:



Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և ուսանողների միջև, այնպես էլ իրենց, ուսանողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է ուսանողների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է ուսանողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ:

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու

կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին՝ թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները: Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով: Հետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց: Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է: Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. *action- փոխազդեցություն* բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ:

Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում

են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը։ Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային։ Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում։ Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը։ Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են։ Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար։ Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար։ Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը։ Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց։ Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ։ ԵՎ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ։

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ։ Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում։ Այսպիսով, երբեմն ԱՈՒՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն։ Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար։

Ակտիվ ուսուցման մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը։ Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ։ ԱՈՒՄ-ը բնութագրվում է ուսանողների ակտիվության բարձր մակարդակով։ Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից։ ԱՈՒՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը։ ՈՒԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա։ ՈՒԱՄ-ի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա։ Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Ուսանողների ճանաչողական ակտիվության բարձրացում.

- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Ուսանողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Ուսանողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

ԱԿՏԻՎ, ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Պասիվ մեթոդ Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են: Ուսուցիչ աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է:

Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ աշակերտ համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին: Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ

մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումն գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար աշակերտները պետք է մտածեն, ստեղծագործեն: Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «interփոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի , այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:

Ուսուցչի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:
2. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:
3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը:
5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն:

Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ, ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում մասնագիտական գործունեության ժամանակ թույլ չտա: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

•Բոլոր մասնակիցները հավասար են

•Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ

•Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը

•Ոչ մի աշակերտ չի քննադատվում

•Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը, ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար:

•Ուսուցիչը պարբերաբար ակտիվացնում է աշակերտների համագործակցությունը, հանում մասնակիցների միջև առաջացած լարվածությունը:

•Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է

•Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, տեսահոլովակներ

• Հաղորդակցությունը իրականացվում է ուսուցչի կողմից ձևակերպված կանոնների համապատասխան:

Ինտերակտիվ մեթոդների կիրառման դրական արդյունքներն են՝

•Ինտերկտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս ակտիվացնել գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար:

•Ինտերկտիվ ուսուցումը մեծացնում է աշակերտների մոտիվացիան, ներգրավվածությունը քննարկվող խնդիրների լուծման մեջ, ինչը մեծացնում է հետաքրքրությունը, հուզական խթան է հանդիսանում հետագա որոնման գործունեությանը, խրախուսում է նրանց կոնկրետ գործողությունների:

•Ձևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը:

•Զարգացնում է մյուսների տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը:

•Աշակերտների դիրքորոշման մշտական արտահայտությունը վերացնում է սխալի

վախը՝ քանի որ նույնիսկ սխալ արտահայտությունը չի պատժվում բացասական գնահատականով:

- Համատեղ գործնեությունը նպաստում է ուսուցչի հետ վստահելի փոխհարաբերությունների առաջացմանը:

•Կիրառելով ինտերակտիվ մեթոդներ և տեխնոլոգիաներ ուսուցիչները հնարավորություն ունեն զարգացնել աշակերտի ստեղծագործական, կրեատիվ մտածելակերպը: Դա ընդունակություն է գտնել նոր, օրիգինալ, ստանդարտ մտածելակերպից դուրս մտքեր, առաջացած խնդիրների լուծում ոչ ավանդական եղանակներով:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Ինտերակտիվ դասավանդման մեթոդները բաժանվում են 2 խմբի՝ իմիտացիոն և ոչ իմիտացիոն: Իմիտացիոն տեխնոլոգիաների հիմքում ընկած է իրական իրավիճակների գործնեության խնդիրների վերարտադրումը ուսումնական պրոցեսի ընթացքում: Ոչ իմիտացիոն մեթոդները բնութագրվում են ուսումնասիրվող գործընթացի մոդելի բացակայությամբ, հարց-պատասխան հաղորդակցությամբ: Իմիտացիոն մեթոդները բաժանվում են խաղային և ոչ խաղային: Ուսուցիչը մատուցում է պատրաստի նյութը, որը աշակերտները պետք է հիշեն, շատ ժամանակ առանց լավ հասկանալու: Սա նվազեցնում է աշակերտի ինքնուրույնությունը, ակտիվությունը: Այդ պատճառով ուսումնականն պրակտիկայում ավելի ու ավելի տարածվում են ոչ ավանդական ինտերակտիվ ձևերը: Ակտիվ և ինտերակտիվ ուսուցման գաղափարը աշակերտի ուշադրության կրթական և ճանաչողական մտածելակերպի ակտիվացումն է: Հետևաբար ակտիվացման մեթոդների կիրառումը թույլ կտա ավանդական տիպի դասապրոցեսը մոտեցնել ինտերակտիվ տարբերակին: Դասապրոցեսի ընթացքում աշակերտների ակտիվ ճանաչողական գործունեության մոբիլիզացման համար, դասը պետք է սկսվի հետաքրքիր ներածական մասից: Օրինակ կարելի է ներկայացնել թեմայի կարևորությունը աշակերտի ապագա մասնագիտական գործունեության համար, ցույց տալ թեմայի կապը նախորդ թեմայի հետ: Կարող են օգտագործվել տեսանյութեր, ուր կցուցադրվի տեսական նյութի կիրառումը գործնականում: Դասապրոցեսի հետաքրքիր սկզբնամասից առաջացած ակտիվությունը պետք է պահպանվի ամբողջ դասի ընթացքում կարելի է կիրառել հետևյալ հնարքները՝

•Ներկայացնել՝ տարբեր հետազոտությունների տեսանկյունները մեկ հարցի վերաբերյալ և այսօր գիտության մեջ ընդունված տեսանկյունը:

•Դասի ընթացքում պահպանել շփումը:

•Ուշադրություն դարձնել հուզական ֆոնի, ուշադրության բարելավմանը մեծ գիտնականների բժիշկների կյանքից օրինակների բերման միջոցով:

•Կարևորելով դասի հիմնական դրույթները շեշտադրել կարևոր հարցերը «Այս հարցի բարդությունն ու առանձնահատկությունը...», «Ուշադրություն դարձրեք...» և այլն:

ԴԻՍԿՈՒՍԻԱ «ՔՆՆԱՐԿՈՒՄ»

Քննարկումը հանդիսանում է ինտերակտիվ մեթոդների համակարգում որպես բազային, ինտեգրվելով դրանցից յուրաքանչյուրի մեջ: Դրա հետ մեկ տեղ այն հանդիսանում է առանձին ինքնուրույն մեթոդ: Լատիներեն թարգմանությունից. «discussio» նշանակում է վերլուծություն: Այս մեթոդը մանկավարժություն է եկել քաղաքականությունից: Դա որևէ պրոբլեմի կոլլեկտիվ քննարկումն է: Ավելի կիրառական է գործնական պարապունքների ժամանակ : Յուրաքանչյուր քննարկում անցնում է 3 փուլով՝ կողմնորոշում, գնահատում, համախմբում:

Կողմնորոշման փուլը ենթադրում է մասնակիցների հարմարվողականությունը միմյանց, խնդրին, ինչը հնարավորություն է տալիս ձևակերպել խնդիրը, նպատակները, սահմանել կանոններ:

Գնահատման փուլում մասնակիցները տալիս են առաջացած հարցերի պատասխանները, հավաքում գաղափարներ, առաջարկություններ:

Համախմբման փուլը բաղկացած է քննարկումների, արդյունքների վերլուծությունից, որոշումների համատեղ ձևակերպմամբ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽԱՂ

Խաղայինը իմիտացիոն ուսուցման մեթոդներից է: Սա ապագա վերարտադրում է, մասնագիտական գործունեության փորձը: Այն թույլ է տալիս վերարտադրել կոնկրետ իրավիճակներ: Այս մեթոդը պահանջում է աշակերտների պատրաստվածություն և կոլեկտիվ աշխատելու կարողություն: Յուրաքանչյուրը լուծում է իր ֆունկցիաներին և դերակատարությանը համապատասխան խնդիրը: Գործնական խաղը սովորեցնում է համագործակցման հմտությունների: ՈՒսուցման պրոցեսը մաքսիմալ նմանեցվում է իրական գործնեությանը: Ստացված տեսական գիտելիքները փոխանցվում են գործնականի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Այսպիսով ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու համադրելու հմտությունը: Ուսուցչի մեթոդական ձեռնհասությունը ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևոր ուղիներից մեկն է:

Արդյունքում ուսուցիչը պետք է կարողանա տիրապետելով ավանդական և ժամանակակից ինտերակտիվ մեթոդներին, օգնել և աջակցել ուսուցմանը, ապահովել արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ համապատասխան ուսուցման միջավայր, նյութեր և գործընթաց: Սովորողների համար ստեղծել մտածելու հնարավորություններ, կազմակերպել և առաջնորդել նրա փորձառության ձեռքբերումը: Ուղղորդի սովորողներին և դասարանում ստեղծի համագործակցության և ակտիվության դրսևորման բարենպաստ միջավայր:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Հ.Հ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ Երևան «Ան-Ջոն» 2008թ.
2. Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014
3. Բաբանսկի Յու. Կ. Դասավանդման մեթոդների ընտրություն միջնակարգ դպրոցում: / Մ., 1981:
4. Դյաչենկո Վ.Կ. Նոր դիդակտիկա: Մ., TKVelby, Prospect հրատարակչություն, 2001
5. Բալաև Ա.Ա. «Ակտիվ ուսուցման մեթոդներ» Մ., 2006:
6. Սմոլկին Ա.Մ. «Ակտիվ ուսուցման մեթոդներ» Մ., 1991:
7. Անցիբոր Մ.Մ. «Ակտիվ ձևեր և ուսուցման մեթոդներ», Տուլա 2002 թ.
8. Վիգոտսկի Լ.Ս. Մանկավարժական հոգեբանություն.